

John Harris իր մեծածառալ երկհատոր Collection of Voyages and Travels (1744-48) գործին մէջ Պարկաստանի մասին գրած ատեն կը կրկնէ Թավէրնիէի ըսածները եւ կ'օգտուի նաեւ բազմաթիւ ուրիշ գրողներէ :

«Նշանաւոր Շահ Աբբասն էր, որ նախ եւ առաջ նկատեց պարզութիւնը, ազնուութիւնը, ժրջանութիւնը, թափանցկութիւնը եւ վրաստահելիութիւնը հայերու իրենց բնիկ երկրին մէջ անոնց փոքր գործերուն ընթացքին, ուր անոնք ենթարկուած էին Պարսից եւ Թրքաց կեղեքումներուն: Ան (Շահ Աբբաս) ոչ միայն եռանդուն եւ զօրաւոր էր, այլ եւ շատ խելացի եւ խոհեմ իշխան մը, որ կը փափաքէր իր երկրին մէջ ներմուծել առեւտուր, ուր մինչեւ իր դահակալութեան ատեն հազիւ թէ ատոր ծանօթ էին: Ան ոչ նուազ կը փափաքէր այդ նպատակին համար ներշնչել իր հպատակները, որոնք մինչեւ այդ ատեն քիչ ծանօթութիւն ունէին առեւտուրի մասին: Որպէսզի կարելի ըլլար կատարել այս մեծ եւ գովելի նպատա-

գոր կը գործածեն իրենց հանդիպած լճակին կամ դետին մէջ: Այս պաշարին փոխադրութիւնը իրենց քիչ կ'արժէ: Երբ իրենց մնալիք մէկ քաղաքը կը հասնին, հինգ կամ վեցը մէկտեղ կը խմբակցին եւ պարապ սենեակի մը մէջ կը բնակին, զոր իրենք կը կահաւորեն, իւրաքանչիւրը իր անկողնով, ծածկոցով, խոհանոցի իրերով եւ այսպէս մեծ խնայողութիւն կ'ընեն: Երբ քրիստոնեայ երկրի մէջ կը ճամբորդեն, իրենց հետ կը կրեն սաֆրօն, պղպեղ, մըշկընկոյզ եւ ուրիշ համեմներ, որոնք փոքր քաղաքներու մէջ կը փոխանակեն հացի, դինիի, կարագի, պանիրի, կաթնեղէններու եւ ուրիշ ուտեստներու հետ, զոր խեղճ կ'ընեն կը խնդրեն: Երբ քրիստոնեայ երկրներէ կը դառնան, իրենց հետ կը բերեն ամէն տեսակ փերեղակային ապրանքներ, ձեռքէ տունէ տուն ծախուելիք Նիւրբմպէրկի եւ Վենետիկի իրեր, ինչպէս փոքրիկ հայելիներ, կիտուածեայ մանր իրեր, կեղծ մարդարխաներ եւ ատոնց նման ուրիշ իրեր, զոր իրենց ճամբու ընթացքին բնիկներուն հետ ուտեստի հետ կը փոխանակեն»: (Անդ՝ էջ 159)

կը, ան յարմար դատեց իր մտադրութիւնը ընթացիկ ապրանքի մը վրայ հիմնել եւ այդ պատճառով մետաքսը ընտրեց: Յետոյ, 20 կամ 30 հայեր փոխադրեց Գիլանի նահանգը, ուր անոնք ինքզինքնին յարմարացուցին այնքան լաւ կերպով, որ շատ կարճ ժամանակի մէջ ահազին քանակութեամբ մետաքս արտադրութեցաւ հոն: Այս ուրախացուցիչ սկզբնաւորութենէն քաջալերուած, ան կործանեց Հայաստանի հին Զուղայ քաղաքը եւ բնակիչները փոխադրեց Սպահանի մերձակաները, ուր իր արքունի առատածեռնութեամբ եւ իր աղբուհովանաւորութեամբ, անոնք կառուցին Սպահանի Նոր Զուղան: Այս հայերը իր առաջնորդութեամբ ձեռնարկեցին՝ պարսիկ գործակատարներէ չսպառուած բոլոր մետաքսը ցըրուելու Ասիոյ եւ Եւրոպայի մէջ: Նախ՝ յարմար դին մը որոշեց, որ իրենց դարձին (հայ վաճառականները) ստիպուած ըլլան իրեն (Շահին) վճարել, իսկ մնացած ամբողջ շահը իրենց պահեն: Երբ հարկը պահանջէր, Շահը անոնց դրամ փոխ կուտար իրենց առեւտուրը յառաջ տանելու համար: Սակայն, աստիճանաբար, մինչ անոնք (հայերը) կը հարստանային, կառավարութիւնը այլեւս մասնակից չեղաւ իրենց առեւտուրին»: 1)

1) Բ. հատոր էջ 888: Հարրիս կ'աւելցնէ շատ դեղեցիկ եւ յաջող համեմատութիւն մը հայ եւ հրեայ առեւտրականին միջեւ, որ կ'արժէ հոս ներկայացնել:—

«Այսպէս, մարդու մը (Շահ Աբբասի), ճիշդ ակնկալութենէն եւ իր հպատակները կարենալ ուղիղ դատելէն բարձրացաւ բոլոր Հայոց առեւտուրը, որոնք այժմ (1744-48) առեւտրականներու աղբութիւն մը եղած են եւ կ'ընեն ամենէն ընդարձակ առեւտուրը աւելի քան որեւէ ուրիշ ժողովուրդ, որովհետեւ բացի իրենց Նոր Զուղայի հաստատութիւններէն եւ Պարսկաստանի բոլոր մեծ քաղաքներէն, անոնք կը տարածուին ընդհանուր Արեւելքի մէջ, կը վարեն արտակարգօրէն մեծ առեւտուր Ռուսիոյ մէջ եւ իրենց ազգէն ներկայացուցիչներ ունին Եւրոպայի առեւտրական մեծ քաղաքներու մեծ մասին մէջ: Մէկ խօսքով՝